# ArCa Classic Քարտի տրամադրման և սպասարկման սակագները

| Ծառայության տեսակ | Սակագին |
|---|---|
| 1. Քարտային հաշվի սպասարկման միջնորդավճար | 3,500 ՀՀ դրամ տարեկան*/ acba digital համակարգով պատվիրելու դեպքում ՝ 2,500 ՀՀ դրամ տարեկան |
| 2. Վարկային գծի օգտագործման և/կամ հաշվի գերածախսի դիմաց գանձվող տարեկան տոկոսադրույք[1] | Վարկային գիծ/հաշվի գերածախս ՀՀ դրամ<br>-առանց գրավային ապահովվածության՝ 19.5%-21%<br>- գրավային ապահովվածությամբ՝ 18%-21% |
| 3. Վարկային գծի օգտագործման անտոկոս ժամանակահատված | - |
| 4. Ամսական պարտադիր մարումներ | 10% |
| 5. Լրացուցիչ քարտի սպասարկման միջնորդավճար (թողարկվում է հիմնական քարտի ժամկետով) | ▪ American Express Cashback՝ անվճար<br>▪ Mastercard UEFA Champions League՝ 2,000 ՀՀ դրամ միանվագ |
| 6. Կից քարտի սպասարկման միջնորդավճար (թողարկվում է հիմնական քարտի ժամկետով) | անվճար |
| 7. Քարտային հաշվի արժույթ | ՀՀ դրամ |
| 8. Քարտի գործողության ժամկետ | 5 տարի |
| 9. Կանխիկ դրամի տրամադրում բանկոմատներում և կանխիկի տրամադրման կետերում՝ | |
| • *ԱԿԲԱ Բանկ* | 0% |
| • *Այլ բանկեր Հայաստանում* | 1% |
| • *Այլ բանկեր արտերկրում* | - |
| 10. Բանկի քարտային հաշիվներին կանխիկ դրամի մուտքագրում «Արմենիան Քարդ» համակարգի անդամ բանկերի բանկոմատների միջոցով | 1% |
| 11. Կանխիկի տրամադրման օրական հիմնական սահմանաչափ | ▪ 500,000 ՀՀ դրամ<br>▪ 1,000 ԱՄՆ դոլար<br>▪ 1,000 եվրո |
| 12. Կանխիկացման գործարքների օրական առավելագույն քանակ | 10 |
| 13. Վճարային գործարքների օրական առավելագույն սահմանաչափ | ▪ 1,000,000 ՀՀ դրամ<br>▪ 2,000 ԱՄՆ դոլար<br>▪ 2,000 եվրո |
| 14. ՀՀ տարածքում քարտից քարտ փոխանցումներ առցանց հարթակների, «ACBA DIGITAL» ինտերնետ բանկինգ համակարգի միջոցով | 0.5% |
| 15. Բանկոմատների միջոցով քարտից քարտ փոխանցումներ[2] | 0.2% |
| Քարտով կատարված գործարքների վերաբերյալ տեղեկացման ծառայություն SMS հաղորդագրության միջոցով | 20 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ<br>(գանձվում է յուրաքանչյուր հաղորդագրության դիմաց) |
| 16. Քարտով կատարված գործարքների վերաբերյալ տեղեկացման ծառայություն acba digital ինտերնետ բանկինգ համակարգի միջոցով | անվճար |
| 17. Քարտի Պին կոդի վերականգնում/ փոփոխություն | 500 ՀՀ դրամ |
| 18. Քարտի փոխարինում (Հայաստանում) | 1,000 ՀՀ դրամ |
| 19. USSD-տեղեկացում ծառայություն | 10 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ<br>(գանձվում է յուրաքանչյուր հաղորդագրության դիմաց) |

**Ծանուցումներ**

Քարտային հաշվի դրական մնացորդի դիմաց 365-օրյա ժամանակահատվածի ընթացքում տարեկան պարզ տոկոսադրույքի կիրառման և տոկոսների կապիտալացման ու վճարման հաճախականության հետևանքով տարեկան տոկոսային եկամտաբերությունը բոլոր քարտերի համար կազմում է 0%:

ԱԿԲԱ ԲԱՆԿՈՒՄ ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորված է «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից» հատուցման ենթակա ավանդների չափերով, մասնավորապես՝

- ✓ միայն դրամային ավանդների դեպքում - 16 մլն ՀՀ դրամ,
- ✓ միայն արտարժութային ավանդի դեպքում - 7 մլն ՀՀ դրամ,
- ✓ և' դրամային (7 միլիոնից ավել), և' արտարժութային ավանդների դեպքում – միայն դրամային ավանդը՝ մինչև 16 մլն ՀՀ դրամի չափով,
- ✓ և' դրամային (7 միլիոնից պակաս), և' արտարժութային ավանդների դեպքում - դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժութային ավանդը՝ 7 մլն ՀՀ դրամի և հատուցված դրամային ավանդի տարբերության չափով:

Տոկոսագումարները հաշվարկվում են քարտային հաշվի մնացորդի նկատմամբ, օրական կտրվածքով, քարտի գործողության ողջ ժամկետի համար: Տոկոսագումարի հաշվարկը դադարեցվում է քարտի գործողության ժամկետի ավարտին հաջորդող ամսվա 14-ին կամ հաջորդ աշխատանքային օրը:

Հաշվարկված տոկոսագումարները վճարվում են քարտային հաշվին ամսական կտրվածքով՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը:

**Սակագներում օգտագործված տերմինների մեկնաբանություն**

- **Անտոկոս ժամանակահատված** - արտոնյալ ժամանակահատված, որի ընթացքում վճարային գործարքների կատարման համար քարտի վարկային միջոցների օգտագործած մասը քարտային հաշվին մուտք անելու դեպքում քարտապանը տոկոսագումարներ չի վճարում:
- **Ամսական պարտադիր մարումներ** - յուրաքանչյուր ամսվա վերջի դրությամբ օգտագործված վարկային գծի նշված տոկոսը ենթակա է վճարման այդ ամսվա ավարտից հետո 50 օրվա ընթացքում: Տվյալ ժամկետում նշված պարտավորությունը չկատարելու դեպքում քարտապանը պարտավորվում է բացի պարտադիր մարման ենթակա գումարից վճարել նաև տվյալ պահին քարտային հաշվի սպասարկման համար առաջացած դրամային պարտավորությունը, առաջացած գերածախսը և գերածախսի նկատմամբ հաշվարկված տոկոսները:
- **Լրացուցիչ քարտ** - գործող քարտային հաշվին կցված այլ վճարային համակարգի քարտ: Լրացուցիչ քարտը հնարավորություն է տալիս Քարտապանին օգտագործել հիմնական քարտային հաշվին առկա միջոցները, եթե հիմնական քարտի հետ առաջացել են չնախատեսված խնդիրներ կամ այն չի սպասարկվում տվյալ առևտրի/սպասարկման կետի և/կամ բանկոմատի կողմից:
- **Կից քարտ** - գործող քարտային հաշվին կցված միևնույն վճարային համակարգի և տեսակի քարտ: Կից քարտը տրամադրվում է հիմնական քարտի քարտապանի կողմից նշված անձին և հնարավորություն է ընձեռում վերջինիս օգտագործել հիմնական քարտի հաշվին առկա միջոցները կից քարտի դիմումի մեջ նշված սահմանաչափերի շրջանակում: Ցանկացած տեսակի քարտի համար տրամադրվում է առավելագույնը 2 կից քարտ, բացառությամբ American Express Gold (առավելագույնը 4 կից քարտ) և ArCa Business ու Visa Business (անսահմանափակ քանակությամբ կից քարտեր) քարտատեսակների:
- **Քարտով կատարված գործարքների վերաբերյալ տեղեկացման ծառայություն SMS հաղորդագրության միջոցով** - բանկում գրանցված հիմնական հեռախոսահամարին քարտապանի քարտային հաշվի շարժի վերաբերյալ sms-հաղորդագրության ստացում:

---

* Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի վճարման նպատակով տրամադրվող քարտերի դեպքում՝ առանց սպասարկման միջնորդավճարի գանձման:

[1] Վարկային գիծ չունեցող քարտերի համար որպես գերածախսի դիմաց գանձվող տարեկան տոկոսադրույք սահմանվում է տվյալ քարտատեսակի համար նախատեսված տոկոսադրույքի միջակայքի առավելագույն շեմը:

[2] Բացի նշված սակագնից Բանկի բանկոմատների միջոցով քարտից քարտ փոխանցումների դիմաց կիրառվում է նաև սպասարկող բանկի միջնորդավճար՝ 0.3%: Ընդ որում, ՀՀ այլ բանկերի բանկոմատների միջոցով քարտից քարտ փոխանցումների դեպքում ևս կարող է կիրառվել սպասարկող բանկի միջնորդավճար, որի չափը սահմանվում է տվյալ բանկոմատը սպասարկող բանկի կողմից:

թարմացվել է առ՝ 24.10.2025թ.